

Հաստատված է

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ գիտական խորհրդի

«_1_»_նոյեմբերի_____2019 թ. թիվ _139_ նիստում

ՀՀ ԳԱԱ ԳԿՄԿ տնօրեն

Ա. Սարգսյան



ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ

ԾՐԱԳԻՐ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ՊՐԱԿՏԻԿԱՅԻ

ԵՐԵՎԱՆ

2019

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գիտահետազոտական պրակտիկան մագիստրոսի կրթական ծրագրի պարտադիր բաղադրիչ է: Գիտահետազոտական պրակտիկան նպատակաուղղված է աջակցելու ուսանողների՝ ստացած տեսական մասնագիտական գիտելիքներն ամրապնդելուն, դրանց գործնական կիրառությանը, ինքնուրույն գիտահետազոտական աշխատանքին անհրաժեշտ կարողությունների ձեռքբերմանը:

2. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտահետազոտական պրակտիկայի նպատակը ուսանողների մասնագիտական գիտելիքների ընդլայնումն ու խորացումն է, դրանց համակարգումը և ամրագրումը, ինքնուրույն գիտական աշխատանքներ, հետազոտություններ և փորձարկումներ կատարելու կարողությունների ձևավորումը:

Գիտահետազոտական պրակտիկայի հիմնական խնդիրներն են.

- ուսանողների ծանոթացումը գիտական հետազոտությունների անցկացման մեթոդներին, գիտական աշխատանքի կատարման տարբեր փուլերի, գիտական որոնումների, ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքների վերլուծության, մշակման, համակարգման մեթոդներին, դրանք մագիստրոսական թեզի գրելու ժամանակ կիրառելու կարողությունների ձևավորումը,
- ուսանողների կողմից արդի գիտական հիմնախնդիրների ուսումնասիրման բնագավառում կոլեկտիվ գիտական աշխատանք կատարելու փորձի ձեռքբերումը,
- տարբեր գիտական խմբերի և հետազոտողների հետ համագործակցելու ունակությունների ձեռքբերումը,

- հետազոտությունների նպատակի, խնդիրների ձևակերպման, նախապատրաստման, կազմակերպման, իրականացման, արդյունքների ամփոփման կարողությունների ձևավորումը:

Գիտահետազոտական պրակտիկայի ընթացքում ուսանողը պետք է ուսումնասիրի.

- մագիստրոսական թեզի թեմային վերաբերող գրական և պատենտային աղբյուրները,
- հետազոտական աշխատանքների անցկացման մեթոդները և ձևերը,
- հետազոտությունների համար օգտագործվող սարքերը, սարքավորումների շահագործման կանոնները, անվտանգության նորմերի պահպանման կանոնները,
- փորձարարական տվյալների մշակման և վերլուծության մեթոդները,
- գիտական հետազոտություններում օգտագործվող տեղեկատվական տեխնոլոգիաները,
- գիտական և գիտատեխնիկական նյութերի ձևակերպմանը ներկայացվող պահանջները:

Պրակտիկայի ընթացքում ուսանողը պետք է կատարի.

- հետազոտության թեմայով գիտական և գիտատեխնիկական ինֆորմացիայի հավաքագրում, վերլուծություն, համակարգում, ընդհանրացում և ամփոփում,
- թեզի թեմայով տեսական կամ փորձարարական հետազոտություն,
- ստացված արդյունքների հավաստիության վերլուծություն,
- անցկացված հետազոտությունների գիտական կամ գործնական նշանակության վերլուծություն, եզրակացությունների ձևակերպում:

3. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՏԵՂԸ ԵՎ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

1. Գիտահետազոտական պրակտիկան անցկացվում է մագիստրոսի կրթական ծրագրի երկրորդ կուրսի երկրորդ կիսամյակում: Պրակտիկայի տևողությունը կազմում է 2 շաբաթ` համաձայն ուսումնական պլանի:

2. Պրակտիկան կարող է անցկացվել մագիստրոսական ծրագրերի ուսուցումն իրականացնող մասնագիտական ամբիոններում, ինչպես նաև այլ պետական, հասարակական կազմակերպություններում, հիմնարկ-ձեռնարկություններում, որտեղ առկա են անհրաժեշտ պայմաններ և հնարավոր է ավարտական աշխատանքի կատարման համար անհրաժեշտ նյութերի ուսումնասիրում և հավաքում:
3. Գիտահետազոտական պրակտիկան սկսվելուց առաջ ուսանողների հետ պրակտիկայի անցկացմանը վերաբերող հարցերի լուսաբանման նպատակով անցկացվում է նախապատրաստական-կազմակերպական կոնֆերանս:
4. Գիտահետազոտական պրակտիկայի անցկացման նպատակով բոլոր ուսանողների համար նշանակվում են ղեկավարներ՝ համապատասխան մասնագիտական ամբիոններից և պրակտիկայի վայրից:
5. Գիտահետազոտական պրակտիկայի ընթացքում ուսանողի գործունեությունը պետք է համապատասխանի ուսանողի գիտահետազոտական աշխատանքի թեմայի նպատակներին և խնդիրներին:
6. Գիտահետազոտական պրակտիկայի ընթացքում ուսանողները պարտավոր են պահպանել պրակտիկայի անցկացման վայրի ներքին կանոնակարգի և անվտանգության տեխնիկայի բոլոր կանոնները:

Պրակտիկան ավարտելուց հետո ուսանողները ձևակերպում են անհրաժեշտ փաստաթղթեր՝ ըստ պրակտիկայի ծրագրի պահանջների:

4. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Գիտահետազոտական պրակտիկան իրականացվում է մագիստրոսական թեզի հաստատված թեմայի շրջանակներում՝ հաշվի առնելով պրակտիկայի անցկացման վայրի հնարավորությունները:

Գիտահետազոտական պրակտիկայի բովանդակությունը որոշվում է մագիստրոսական ծրագրերի ղեկավարների կողմից՝ մասնագիտության բարձրագույն մասնագիտական կրթության պետական չափորոշչի համաձայն, և արտահայտվում է գիտահետազոտական պրակտիկայի անհատական ծրագրում:

Պրակտիկայի ընթացքում ուսանողների աշխատանքը կազմակերպվում է համաձայն հաստատված անհատական աշխատանքային պլանի.

- հետազոտության նպատակների և խնդիրների ձևակերպում,
- տվյալ խնդրին վերաբերող մեթոդաբանության՝ գրական նյութերի, սկզբնաղբյուրների ուսումնասիրություն և վերլուծություն,
- անհրաժեշտ նյութերի որոնում, ընտրություն և համակարգում (պատենտային գրականություն, տպագրված գիտական հոդվածներ և մենագրություններ, կատարված գիտահետազոտական աշխատանքների հաշվետվություններ և այլն),
- հետազոտության անցկացման մեթոդների որոշում, աշխատանքի պլանավորում,
- պլանավորված աշխատանքների իրականացում,
- ստացված փորձարարական տվյալների հավաքագրում, վերլուծություն,
- հետազոտության արդյունքների վերլուծություն և ամփոփում,
- եզրակացությունների ձևակերպում:

5. ՈՒՍԱՆՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐՈՒՄ

Ուսանողի գործունեությունը պրակտիկայի անցկացման վայրում բաղկացած է հետևյալ փուլերից.

Փուլ 1.

- հետազոտության անցկացման աշխատանքային պլանի և ժամանակացույցի կազմում,
- պրակտիկայի աշխատանքային պլանի և ժամանակացույցի ձևաթերթերը ներկայացված են հավելված 1,2-ում,
- աշխատանքային պլանը կազմվում է ուսանողի կողմից՝ գիտական ղեկավարի մասնակցությամբ:

Փուլ 2.

- կոնկրետ խնդիրների և նպատակների ձևակերպում, արտասահմանյան և հայրենական գրականություն տվյալ թեմային վերաբերվող գրական տվյալների

հավաքում, վերլուծություն, (աշխատանք գրադարանում, նյութերի որոնում
ինտերնետի ռեսուրսներում), ամփոփում,

- փորձարարական աշխատանքների կատարում, տվյալների ամփոփում և
վերլուծություն,

Փուլ 3.

- անցկացված հետազոտության արդյունքների ամփոփում, ձևակերպում և
համաձայնեցում՝ մագիստրոսական թեզի ղեկավարի հետ:

6. ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Պրակտիկայի արդյունքում ուսանող-մագիստրանտները տիրապետում են .

- գիտական հետազոտությունները ինքնուրույն պլանավորելու և իրականացնելու
կարողությունների,
- գիտահետազոտական աշխատանքների մեթոդաբանության հիմնական
դրույթներին և դրանք մագիստրոսական թեզի թեմայով աշխատանքներում
կիրառելու կարողության,
- գրականության ուսումնասիրության և աղբյուրագիտական աշխատանքներ
իրականացնելու և այդ ոլորտում տեղեկատվության ու հաղորդակցության
միջոցները ու տեխնոլոգիաները կիրառելու կարողությունների,
- հետազոտությունների մեթոդները ընտրելու, դրանք հետազոտության
նպատակներին և խնդիրներին համապատասխանեցնելու և կիրառելու
կարողությունների,
- գիտական տեղեկույթը հավաքելու, վերլուծելու, համակարգելու և մշակելու
ժամանակակից մեթոդների օգտագործման կարողության,
- հետազոտությունների ընթացքում ծագած խնդիրները լուծելու
կարողությունների,
- հետազոտությունների արդյունքները մշակելու կարողության,
- հետազոտության թեմային վերաբերվող նյութերը հաշվետվությունների,
տպագրությունների, զեկուցումների ձևով շարադրելու կարողության,
- իրականացրած հետազոտությունը ներկայացնելու կարողության:

7. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՅՈՒԹԵՐԸ

Պրակտիկայի արդյունքներով ուսանողը մասնագիտական համապատասխան ամբիոն է ներկայացնում.

- մագիստրոսական թեզի թեմային վերաբերվող գրականության վերլուծություն,
- հաշվետվություն՝ փորձարարական աշխատանքների տվյալների վերլուծությամբ և ամփոփմամբ,
- գիտական ղեկավարի կողմից ստորագրված պրակտիկայի հաշվետվությունը ներկայացվում է մագիստրոսական ծրագրի ղեկավարին:

8. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Պրակտիկայի ղեկավարումն ու վերահսկողությունը իրականացվում է ռեկտորի հրամանով նշանակված համապատասխան ամբիոնների մասնագետները:

8.2. Գիտահետազոտական հետազոտության հետ կապված խնդիրների լուծման գործում մեթոդական օգնություն տրամադրում է ուսանողին:

8.3. Պրակտիկայի ղեկավարը՝

- գիտահետազոտական պրակտիկայի թեման, ծրագիրը, մագիստրոսական ծրագիրը համաձայնեցվում է ղեկավարի հետ,
- պրակտիկայի ծրագրի կատարման ուղղությամբ կատարում է անհրաժեշտ կազմակերպչական աշխատանք,
- որոշում է կատարվող հետազոտության փուլերի հաջորդականությունը, պրակտիկայի անցկացման ժամանակացույցը, ուսանողի աշխատանքային ռեժիմը,
- սիստեմատիկորեն վերահսկում է պրակտիկայի ընթացքը և ուսանողների աշխատանքը,
- պրակտիկայի անցկացման և հաշվետվության ձևակերպման հետ կապված բոլոր հարցերում օժանդակում է ուսանողներին:

8.4. Գիտական ղեկավարը

- իրականացնում է պրակտիկայի խնդրի ձևակերպումը, մագիստրոսական թեզի անհրաժեշտ նյութերի հավաքման համար ուսանողներին տրամադրում անհատական առաջադրանքներ, տրամադրում է անհրաժեշտ խորհրդատվություն,
- գրականության ուսումնասիրման և հետազոտության մեթոդների կիրառման ուղղությամբ տալիս է հանձնարականներ:

8.5. Պրակտիկայի անցկացման ընթացքում մագիստրանտը՝

- ղեկավարից ստանում է պրակտիկայի կազմակերպման և անցկացման հետ կապված հանձնարարականներ, բացատրություններ և առաջարկներ, պրակտիկայի անցկացման գրաֆիկի համաձայն՝ ներկայացնում իր կատարած աշխատանքի հաշվետվությունը,
- համաձայն պրակտիկայի ծրագրի և ժամանակացույցի՝ կատարում է հետազոտություններ թեզի թեմայով,
- ըստ սահմանված կարգի՝ կազմում է հաշվետվություն՝ կատարած աշխատանքի մասին՝ արդյունքների ամփոփմամբ:

9. ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

9.1. Պրակտիկայի ատեստավորումը իրականացվում է պրակտիկայի հաշվետվության արդյունքների և պրակտիկայի ղեկավարությունն իրականացնող դասախոսի գրավոր կարծիքի արդյունքներով: Ատեստավորումը կատարվում է ստուգարքի ձևով (ստուգված/չստուգված) և հաշվի է առնվում ուսանողների միջանկյալ(կիսամյակային) ատեստավորման ժամանակ:

9.2. Պրակտիկայի պաշտպանությունից “չստուգված” կամ անհարգելի պատճառով պրակտիկայից բացակայած ուսանողները հեռացվում են:

Հարգելի պատճառով պրակտիկայից բացակայած ուսանողներին ամբիոնի և ղեկանատի համատեղ որոշմամբ թույլատրվում է անցկացնել այլ ժամկետներում՝ դասերից ազատ ժամանակահատվածում՝ ղեկանատի կազմած լրացուցիչ ժամանակացույցի համաձայն:

Մ Ա Գ Ի Ս Տ Ր Ո Ս Ի
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆ

(ԱԱՀ)

(մասնագիտությունը)

N	Պրակտիկայի անցկացման ենթաբաժինը, աշխատանքի բովանդակությունը	Կատարման ժամկետները	Նշում՝ կատարման մասին

Մագիստրոսական ծրագրի ղեկավար՝ _____
Ստորագրություն

Ուսանող՝ _____
Ստորագրություն

**ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ՊՐԱԿՏԻԿԱՅԻ
ԱՆՑԿԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**

Ամիս, ամսաթիվ	Կատարված աշխատանքի հակիրճ բովանդակությունը	Աշխատանքի արդյունքը	Պրակտիկայի անցկացման վայրի պատասխանատուի ստորագրությունը

Մագիստրոսական ծրագրի ղեկավար՝ _____

Ստորագրություն

Ուսանող՝ _____

Ստորագրություն

**Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ**

Մասնագիտություն՝ _____

ԱՄԲԻՈՆ՝ _____

Պրակտիկայի անցկացման հիմնարկության անվանումը

Մագիստրոսական ծրագրի ղեկավար _____ “ _____ ” _____
ստորագր. (ԱԱՀ)

Ամբիոնի կողմից նշանակված պրակտիկայի ղեկավար _____ “ _____ ” _____
(ԱԱՀ)

Պրակտիկայի ղեկավար՝ պրակտիկայի անցկացման հիմնարկությունից _____ “ _____ ” _____
(ԱԱՀ)

Պ Ր Ա Կ Տ Ի Կ Ա Յ Ի
անցկացման հիմնարկության կողմից նշանակված
պրակտիկայի ղեկավարի

ԿԱՐԾԻՔ

_____ մինչև _____ ժամանակահատվածը
_____ ուսանողը(ուհին)

(ԱԱՀ)
անցկացրել է պրակտիկան _____
(կազմակերպության, բաժնի անվանումը)

Պրակտիկայի անցկացման ընթացքում _____
_____ ուսանողը(ուհին)

ուսումնասիրել է հետևյալ հարցերը.

Պրակտիկայի անցկացման ընթացքում ուսանողը(ուհին) իրեն դրսևորել է (տրվում է տվյալ ուսանողի՝ պրակտիկայի ընթացքում դրսևորված գիտելիքների, կարողությունների, ունակությունների գնահատումը):

Պրակտիկայի ղեկավարի ստորագրություն _____

Ուսանողի ստորագրություն _____

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ

Մասնագիտություն-----

Ամբիոն՝-----

Մագիստրոսական ծրագրի դեկավար -----

Ամբիոնի վարիչ -----

Կատարող -----

ԳԻՏԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՊԼԱՆ

Ուսանող _____

ազգանուն, անուն, հայրանուն

դ	Աշխատանքի բովանդակությունը գործունեության հիմնական տեսակները:	Կատարման ժամկետները	Հաշվետվության ձևը
1	Ամբիոնի նյութատեխնիկական բազայի և ուսումնական գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ մեթոդական նյութերի ուսումնասիրում		Գրառում՝ պրակտիկայի օրագրում
2	Ամբիոնի ուսումնադաստիարակչական աշխատանքի պլանավորման և հաշվառման գործընթացների և փաստաթղթերի ուսումնասիրում		Գրառում՝ պրակտիկայի օրագրում

3	Դասախոսությունների, սեմինար և գործնական պարապմունքների հաճախում և վերլուծություն		Պարապմունքների վերլուծություն
4	Դասախոսությունների (1-2), սեմինար (3) և գործնական (3) պարապմունքների նախապատրաստում և անցկացում		Պարապմունքների պլանների և մեթոդական նյութերի կազմում և ներկայացում
5	Որևէ թեմայով թեստային առաջադրանքների մշակում և կիրառում		Թեստային առաջադրանքի մշակում և փորձարկում, արդյունքների վերլուծություն
6	Աշխատանք՝ մասնագիտական գիտամեթոդական գրականության հետ		Հանձնարարված թեմայով գիտամեթոդական նյութերի քարտադարանի կազմում
7	Այլ ուսանողների վարած ուսումնական պարապմունքների հաճախում		Հաճախած պարապմունքների վերլուծություն

Մագիստրոսական ծրագրի

ղեկավար -----

Ուսանող -----

1. Ամբիոնի նյութատեխնիկական բազայի և ուսումնական գործընթացի համար անհրաժեշտ մեթոդական նյութերի ուսումնասիրում

Ուսումնական հաստատության (ամբիոնի) անվանումը, աշխատանքի պայմանները (դասասենյակների, լսարանների, կաբինետների լուսավորությունը, սանիտարահիգիենիկ պայմանները, ուսուցման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների և դիդակտիկ նյութերի առկայությունը և այլն):

2. Պլանավորման փաստաթղթերի ուսումնասիրում

- 2.1. Բարձրագույն մասնագիտական կրթության մասնագիտության և ընդհանուր չափորոշիչների ուսումնասիրում
- 2.2. Ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի ուսումնասիրում
- 2.3. Առարկայական նկարագրերի ուսումնասիրում:

3. Ուսումնական պարապմունքների, դասախոսությունների վերլուծության սխեմա

- 3.1. դասախոսության բովանդակության գիտականություն,
- 3.2. խոսքի արտահայտչականություն և մատչելիություն,
- 3.3. նյութի համապատասխանություն տվյալ առարկայի ծրագրին և օրացուցային- թեմատիկ պլանին,
- 3.4. դասախոսի անձի ազդեցությունը լսարանի վրա:

Դասախոսության վերլուծության սխեմա

1. Դասախոսի անուն, ազգանուն, հայրանուն -----
-
2. Ամսաթիվը, ժամը -----
-
3. Մասնագիտությունը -----
4. Առարկան -----
5. Ուսանողների ընդհանուր թիվը -----
-
6. Դասախոսությանը գտնվող ուսանողների թիվը -----
-
7. Դասախոսության թեման -----

N	Գնահատման առարկան	Որակական գնահատականը	Միավորները
I. Բովանդակությունը			
1	Դասախոսության գիտականությունը	ա) համապատասխանում է պահանջներին, բ) ներկայացվում է հանրամատչելի մակարդակով գ) գիտականությունն ապահովված չէ	5 3 2
2	Տեսական և գործնական նյութի համակցումը	ա) արտահայտված է բավարար չափով, բ) մասամբ է արտահայտված գ) բացակայում է	4 3 2
3	Ապացուցելիությունը	ա) համոզիչ է բ) կրում է դեկլարատիվ բնույթ գ) ապացույցները բացակայում են	5 3 2
4	Դասախոսության կառուցվածքը	ա) հստակ է գ) հստակություն չկա	5 2
6	Համապատասխանությունը ուսումնական ծրագրին	ա) լիովին համապատասխանում է բ) մասնակիորեն համապատասխանում է գ) չի համապատասխանում	5 3 0

7	Ժամանակի օգտագործումը	ա) օգտագործվում է նպատակային ձևով բ) շատ ժամանակ է ծախսվում կազմակերպչական հարցերի վրա գ) օգտագործվում է ոչ նպատակային ձևով	5 3 1
II. Դասախոսության նյութի շարադրումը			
1.	Շարադրման ձևը	ա) հիմնախնդրի ձևով բ) բացատրական- տեղեկատվական ձևով գ) զուտ տեղեկատվական ձևով	5 4 0
2.	Իրազնական նյութերի օգտագործումը	ա) օգտագործվում են բավարար ծավալով բ) օգտագործած նյութերի ծավալը բավարար չէ գ) չեն օգտագործվում	5 4 1
3	Նյութին տիրապետելու մակարդակը	ա) լրիվ տիրապետում է բ) մասնակիորեն օգտվում է կոնսպեկտներից գ) նյութին անբավարար է տիրապետում, կարդում և թելադրում է կոնսպեկտով	5 3 1
4	Նյութի նորույթը	ա) ներկայացվում են գիտության վերջին նվաճումները բ) դասախոսության մեջ կան նորույթի տարրեր գ) ներկայացված նյութը նորույթ չի պարունակում	5 3 0
5	Լսարանի հետաքրքրության մակարդակը	ա) լսարանը հետաքրքրված է բ) հետաքրքրված չէ	4 2
III. Դասախոսի վարքը			
1	Դասախոսություն կարդալու ձևը	ա) գրավիչ է բ) ձանձրալի է	5 2
2	Խոսքի կուլտուրան	ա) բարձր բ) միջին գ) ցածր	5 2 0
3	Կապը լսարանի հետ	ա) արտահայտված բ) ոչ բավարար գ) բացակայում է	5 3 2
4	Պահվածքի ձևը	ա) մեղմ արտահայտված դիմախաղ և շարժումներ բ) ավելորդ դիմախաղ և շարժումներ գ) անկանոն շարժումներ	5 3 2
6	Դասախոսի վերաբերմունքը լսարանի նկատմամբ	ա) պահանջկոտ բ) չափազանց խիստ գ) անտարբեր	4 3 2
7	Դասախոսի տակտը	ա) ունի պատշաճ վերաբերմունք բ) չունի պատշաճ վերաբերմունք	5 2
8	Արտաքին տեսքը	ա) կոկիկ է բ) թափթփված է	4 2

ՎԵՐՋՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՆԴՂԱԿ

100-86` գերազանց,

85-71` լավ,

70-58` բավարար,

58-ից ցածր` անբավարար:

Դասախոսության որակը որոշելիս ուսանողն ընդգծում է գծապատկերում տվյալ հարցին իր կարծիքով, համապատասխանող որակական և քանակական ցուցանիշները, որից հետո քանակական ցուցանիշները գումարվում են` առաջացնելով գումարային գնահատական: Յուրաքանչյուր գնահատական պետք է փաստարկված լինի: Գումարային գնահատականը նշանակելիս հարկավոր է հաշվի առնել այնպիսի կարևոր պահանջներ, ինչպիսիք են կրթական, դաստիարակչական և զարգացնող խնդիրները, ինչպես նաև` դասախոսության գիտականության, մասնագիտական մակարդակի խնդիրը:

4. Մեմինար (գործնական) պարապմունքի վերլուծության գծապատկերը

- 4.1. Ընդհանուր տեղեկություններ` պարապմունքի ձևը, տեղը, դասախոսը, տեղեկություններ ուսանողների մասին (մասնագիտություն, կուրս, խումբ, քանակ):
- 4.2. Օգտագործվող ուսուցման ձևը, մեթոդը, կիրառվող տեխնոլոգիաները:
- 4.3. Ուսանողների հետ դասախոսի կապի, բարյացակամության և պահանջկոտության մթնոլորտի առկայություն:
- 4.4. Հետադարձ կապի ապահովման կիրառվող տեսակները (հարցում, թեստավորում և այլն):
- 4.5. Ցուցադրական և բաժանվող նյութերի որակը:
- 4.6. Ընդհանուր կարծիք պարապմունքի մասին:

5. Թեստային պարապմունքների սխեմա

Թեստային պարապմունքների սխեման կազմվում է հետևյալ բաղադրամասերից.

- թեստային առաջադրանք` խիստ որոշակի ձևով կազմված
- թեստային հարցերից յուրաքանչյուրի “գինը”
- ճիշտ պատասխանը

6. Այլ ուսանողների վարած պարապմունքների արձանագրություններ

(5 պարապմունքից ոչ պակաս)

Ամսաթիվը	Վարող պրակտիկանտի աստ	Առարկան	Պարապմունքի արդյունավետությունը		Ընդհանուր ամփոփում
			Արդյունավետ	Անարդյունավետ	

7. Սկսնակ դասախոսի մասնագիտական պատրաստվածության դիագնոստիկան

	Սկսնակ դասախոսի պատրաստվածության գնահատման ցուցանիշները	Միավորներ՝ 0,1,2,3,4,5
Գիտատեսական պատրաստվածություն 1. Դասավանդվող առարկայի գիտության տեսական հիմքերի իմացություն	1. Կողմնորոշում՝ գիտության նպատակների և խնդիրների ոլորտում 2. Գիտության հիմնական օրինաչափությունների իմացություն 3. Գիտական եզրույթաբանության կիրառում 4. Գիտական տվյալների, փաստերի, հասկացությունների օգտագործումն ուսուցման ընթացքում	
2. Դասավանդվող առարկայի գիտական մեթոդների իմացություն	1. Գիտության տվյալ բնագավառում օգտագործվող մեթոդների էության իմացություն 2. Այդ մեթոդների կիրառումը տվյալ առարկայի դասավանդման ընթացքում	
3. Գիտության զարգացման պատմության և նրա ժամանակակից նվաճումների իմացություն	1.Տվյալ բնագավառի գիտական հայտնագործությունների պատմության իմացություն 2. Այդ գիտելիքների օգտագործումը առարկայի դասավանդման ընթացքում 3. Գիտության և պրակտիկայի ժամանակակից նվաճումների իմացություն, պատկերացումներ՝ ուսուցման ընթացքում տվյալ գիտելիքների օգտագործման մասին	
Մեթոդական պատրաստվածություն 1. Ուսանողի գիտելիքները տվյալ ուսումնական առարկայից՝ որպես ուսուցման գործընթացի բաղկացուցիչ մասի	1. Ուսանողների պատկերացումները տվյալ առարկայի դերի մասին՝ ուսուցման, դաստիարակության և զարգացման համակարգում 2. Տվյալ առարկայի ուսուցման նպատակների և խնդիրների ըմբռնում	

	<p>3. Կողմնորոշում՝ տվյալ առարկայի դասավանդման ուսումնական պլաններում և ծրագրերում</p> <p>4. Տվյալ առարկայի դասավանդման ընթացքում ուսանողների գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորման նախանշում</p>	
2. Տվյալ առարկայի ուսուցման մեթոդների և ձևերի իմացություն	<p>1. Ուսուցման տարբեր մեթոդների էության և դրանց օգտագործման առանձնահատկությունների իմացություն՝ ուսումնական առարկայի դասավանդման ընթացքում</p> <p>2. Կողմնորոշում՝ այդ մեթոդների նպատակային կիրառման ոլորտում</p> <p>3. Առարկայի դասավանդման նոր ձևերի ու մեթոդների էության, կիրառման առանձնահատկությունների իմացություն</p>	
3. Տվյալ առարկայի ուսուցման միջոցների իմացություն	<p>1. Կողմնորոշում՝ տվյալ առարկայի դասավանդման համար կիրառվող տարբեր միջոցների օգտագործման բնագավառում</p> <p>2. Ուսանողների մեջ տվյալ առարկայի նկատմամբ հետաքրքրություն առաջացնող ուսուցողական միջոցների և դրանց ֆունկցիաների դերի գիտակցում</p>	
<p>Հոգեբանամանկավարժական պատրաստվածություն</p> <p>1. Ուսանողների հոգեբանական առանձնահատկությունների իմացություն</p>	<p>1. Ուսանողների հոգեբանական առանձնահատկությունների իմացություն՝ ուսուցման բովանդակության, ձևերի և մեթոդների ընտրության գործում կիրառելու նպատակով</p> <p>2. ուսանողի անձի զարգացման գործում հոգեախտորոշման դերի ընկալում</p> <p>3. Ուսանողների հոգեկան վիճակի տարբեր կողմերի գնահատման մեթոդների իմացություն</p>	
2. Ուսուցման, դաստիարակության և զարգացման հոգեբանական առանձնահատկությունների իմացություն	1. Տարբեր տարիքային խմբերի ուսուցման, դաստիարակության և զարգացման հոգեբանական հիմունքների իմացություն	
3. Տիրապետում մանկավարժության տեսական հիմունքներին	<p>1. Մանկավարժական փոխհարաբերությունների նպատակների և խնդիրների իմացություն՝ ուսանողների ուսուցման, դաստիարակության և զարգացման ընթացքում</p> <p>2. Կողմնորոշում՝ ուսանողների ուսուցման և դաստիարակության մակարդակը որոշելու համար նախատեսված մանկավարժական ախտորոշման մեթոդների բնագավառում</p> <p>3. Պատկերացում՝ դասերի հոգեբանության մասին և տարբեր տեսակի պարապմունքների բնութագիր</p> <p>4. Ուսուցման մեթոդների դասակարգման իմացություն և բնութագրում</p>	

4. Կրթական, մանկավարժական և ուսուցման տեխնոլոգիաների իմացություն	1. Ուսանողների ինքնուրույն և ուսումնական աշխատանքի պլանավորման մեթոդների յուրացում 2. Կողմնորոշում՝ ուսանողների մասնագիտական ուսուցման ոլորտում դասախոսի ստուգիչ-վերլուծողական գործունեության բնագավառում 3. Մանկավարժական տեխնիկայի մեթոդների յուրացում	
--	--	--

8. Արդյունքների մշակում.

K - ընդհանուր մասնագիտական պատրաստվածություն

K₁- գիտատեսական պատրաստվածություն

K₂- գիտամեթոդական պատրաստվածություն

K₃- հոգեբանամանկավարժական պատրաստվածություն

S- միավորների գումարը

$$K_1 = S:(9 \times 3), K_2 = S:(8 \times 3), K_3 = S:(11 \times 4)$$

$$K = (K_1 + K_2 + K_3) : 3$$

Օպտիմալ մակարդակ – մինչև 0.8 միավոր

Թույլատրելի մակարդակ – մինչև 0.6 միավոր

Սահմանային մակարդակ – մինչև 0.3 միավոր

9. Գիտամանկավարժական պրակտիկայի հաշվետվություն

Հաշվետվության մեջ շարադրվում է կատարած աշխատանքի բովանդակությունը, վերլուծության է ենթարկվում նրա որակը, ներկայացվում է եզրակացություն՝ մասնագիտական–մանկավարժական գործունեության համար անհրաժեշտ տեսական և գործնական պատրաստվածության մակարդակի վերաբերյալ, բերվում են առաջարկներ՝ գիտամանկավարժական պրակտիկայի կատարելագործման ուղղությամբ:

10. Ուսանող-պրակտիկանտի բնութագրի սխեմա

ԲՆՈՒԹԱԳԻՐ

----րդ
ուսանող _____
ԱԱՀ

կուրսի

իր գիտամանկավարժական պրակտիկան անցկացրել է _____

ամբիոնում:

_____ մինչև 200 թ. _____ գիտամանկավարժական պրակտիկայի ընթացքում նա դրսևորել է
իրեն _____ որպես

_____(ններկայացվում է ուսանողի վերաբերմունքը պրակտիկայի նկատմամբ, տեսական
պատրաստվածության մակարդակը, առաջադրանքների կատարումը, ակտիվությունն
աշխատանքում, նախաձեռնողականությունը, կարգապահությունը):

Ուսումնամեթոդական _____ աշխատանքի
կատարումը _____

(տրվում է մանկավարժական գիտելիքներին, կարողություններին ու հմտություններին
տիրապետելու մակարդակի գնահատականը, խումբ ղեկավարելու ունակությունը,
ստեղծագործական մոտեցումը՝ ուսումնական պարապմունքների պլանավորմանը,
նախագծմանը, նախապատրաստմանը և անցկացմանը, ուսանողների վերաբերմունքը
պրակտիկանտի- ուսանողի նկատմամբ):

Պարապմունքների անցկացման ընթացքում _____
ԱԱՀ

դրսևորել _____ է

(մասնագիտական ուսուցման տեխնոլոգիաներին տիրապետելու մակարդակը, հետադարձ
կապի ապահովումը, մասնագիտական իմացությունը)

Պրակտիկայի ղեկավարի և ամբիոնի վարիչի առաջադրանքների կատարումը

Պրակտիկայի գնահատականը՝ _____

Մագիստրոսական ծրագրի ղեկավար՝ _____

Ամբիոնի վարիչ՝ _____

Ամբիոնի դասախոս՝ _____

“ _____ ” _____ 200 _____ թ.